Արձանագրություն N 2

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԳՀԽԾՁԲ-2023/47» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Երվանդ Էլիբեկյան
Հանձնաժողովի անդամներ	Վահան Վահանյան, Հայկ Խուրշուդյան, Արամ Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար	Արմինե Գալուստյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ե. Էլիբեկյան)

Ընդունել ի գիտություն, որ 03.11.23թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2023 թվականի նոյեմբերի 10, ժամը 16:15-ն:

2023 թվականի նոյեմբերի 10-ին ժամը 16:15-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության հասցե, հեռախոս, էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ	Կոտայքի մ, ք. Եղվարդ, Չարենցի 198/2-2, 095 90 50 40 sargismarianna@mail.ru	03308717
2	«ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ	Ք. Երևան, Բաբաջանյան փ, 19շ 23 091 01 33 28, sargsyan-samvel@mail.ru	01256867

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ե. Էլիբեկյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հայտերի կազմման և ներկայացման, փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին,

---

(Ե. Էլիբեկյան)

3.1 «ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

➢ Բացակայում են «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող՝ նախկինում կատարած պայմանագրի (համաձայնագրերի, պայմանագրերի) պատճենները, իսկ դրանց պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած, պայմանագրի (համաձայնագրի)՝ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված

փաստաթուղթ) պատճենը կամ նախագծի փորձաքննության դրական եզրակացությունը, կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը,

- Էսքիզային նախագծով ներկայացված չէ բացատրագիրը:

3.2 «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ հայտում առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

«Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշներ՝

ա) Բացակայում են հայտով ներկայացված մասնագետների գրավոր համաձայնությունները գնման առարկա հանդիսացող ծառայությունները մատուցելու վերաբերյալ

բ) Արտոնագրված ճարտարագետ-շինարար /կոնստրուկտոր/ - կցված չեն հայտով ներկայացված մասնագետի որակավորումը հավաստող փաստաթղթեր՝ ԲՈՒՀ-ի կողմից շնորհված դիպլոմ, համապատասխան լիազորված մարմինների կողմից՝ հավաստագրեր, լիցենզիաներ, արտոնագիր

գ) ՀՀ ԱՆ ԳՀԽԾՁԲ-2023/47 ծածկագրով հրավերի թիվ 2 աղյուսակով Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման (բացառությամբ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) համար պահանջվող մասնագետները (Հավելված 1.2-ի 4,5,6,7 տողեր) ներառված չեն ընկերության գործունեության լիցենզիայի համապատասխան ներդիրում կամ ներդիրներում, ինչպես նաև ներկայացված չեն այլ լիցենզավորված կազմակերպությունների ներդիրներում ներառված լինելը հավաստող փաստաթղթերը:

24.11.2023թ.

Հանձնաժողովը որոշեց՝

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով՝ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել մասնակիցներին՝ շտկելու արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Ընդունել ի գիտություն՝

Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են արձանագրված անհամապատասխանությունը:

4. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Ե. Էլիբեկյան)

Ստորև ներկայացվում են մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները

Հ/հ	*գնման առարկայի անվանումը*	*նախահաշվային գին*	*մասնակիցների անվանումը*	*մասնակիցների գնային առաջարկները*		
				առանց ԱԱՀ	*ԱԱՀ*	*ընդհանուր*
1	*ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու Ն.Ա. Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ*	*23 330 000*				

2	ՀՀ Արմավիրի մարզի «Զարիշատ / Արամ/ Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական մասնաշենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ	23 090 000	«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ	17 500 000	3 500 000	21 000 000
			«ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ	23 000 000		23 000 000
3	ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գավառի ԲԿ» ՓԲԸ-ի պոլիկլինիկական մասնաշենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ	17 890 000	«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ	13 750 000	2 750 000	16 500 000
4	ՀՀ Արարատի մարզի Արարատի ԲԿ-ի պոլիկլինիկական մասնաշենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ	11 580 000				
5	ՀՀ Սյունիքի մարզի Կապանի ԲԿ-ի պոլիկլինիկական մասնաշենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ	23 570 000				
6	ՀՀ Կոտայքի մարզի «Նոր Հաճնի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի մասնաշենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ	12 010 000	«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ	9 000 000	1 800 000	10 800 000
7	ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի պոլիկլինիկայի մասնաշենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ	17 890 000				
8	ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ մասնաշենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ	19 600 000	«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ	15 750 000	3 150 000	18 900 000
9	ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի	17 890 000				

	ԲԿ» ՓԲԸ պոլիկլինիկայի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ					

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Ընտրված մասնակիցներ որոշելու մասին

(Ե. Էլիբեկյան)

08.12.2023թ.

Հանձնաժողովը որոշեց՝

6.1 Մասնակիցների ոչ գնային չափանիշները գնահատել հետևյալ կարգով.

Գնահատման չափանիշը	Նվազագույն և առավելագույն միավորը	Մասնակիցների անվանումը	
		«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ	«ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ
Լիցենզիա	Բավարար /անբավարար	Բավարար	Բավարար
Մասնագիտական փորձառություն	Բավարար /անբավարար	Բավարար	Բավարար
Աշխատանքային ռեուրսներ	25-40	39,23	36,21
Արտոնագրված ճարտարապետ /գլխավոր ճարտարապետ/ (5)	6-9	8,52	9
Ճարտարապետ (3)	1-3	3	2,14
Արտոնագրված ճարտարագետ-շինարար /կոնստրուկտոր/ (3)	5-7	7	6
Ճարտարագետ-էներգետիկ /օդափոխ.,ջեռուցման և օդի լավորակման համակարգերի/ (3)	4-6	5,71	6
Ճարտարագետ-էլեկտրիկ /էլ.մատակար.,էլեկտ.լուսավորման ներքին և արտաքին ցանցերի/ (3)	4-6	6	5,65
Ճարտարագետ-հիդրոտեխնիկ /ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր/ (3)	4-6	6	4,77
Ճարտարագետ-կապի ցանցերի և հաղորդակցման համակարգերի (3)	1-3	3	2,65
Նախահաշիվ կազմող մասնագետ (3)	Բավարար /անբավարար	Բավարար	Բավարար
Շինարարական աշխատանքների կազմակերպման մասնագետ (3)	Բավարար /անբավարար	Բավարար	Բավարար
Էսքիզային նախագիծ	30-60	30	30
Ընդամենը՝ (ՏԱ)	**55-100**	**69,23**	**66,21**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատման չափանիշ	Մասնակիցների անվանումը	
	«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ (2,3,6,8 չափաբաժիններ)	«ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ (2 չափաբաժին)
Գնային չափանիշ	100	91,30
Մասնակցին տրվող գնահատական	78,461	69,737

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6.2 Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով, 96-րդ, 97-րդ կետերով՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն ճանաչել ընտրված մասնակից.

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ե. Էլիբեկյան)

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԳՀԽԾՁԲ-2023/47» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափանաժնի համար անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից 10 օրացուցային օր:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը 3,6,8 չափաբաժինների համար անգործության ժամկետ չի կիրառվում:

Անգործության ժամկետի ավարտին հաջորդող չորրորդ աշխատանքային օրը պայմանագիր կնքելու ծանուցում ուղարկել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ *Ե. Էլիբեկյան*

անդամներ՝ _____ *Վ. Վահանյան*

_____ *Հ. Խուրշուդյան*

_____ *Ա. Գրիգորյան*

քարտուղար՝ _____ *Ա. Գալուստյան*